

# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ՊԱՏՐԻԱՐՔ-ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՓՐԵՄ Բ-ԻՆ՝ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՍՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԸ

**Թբիլիսի**

Ուրախությամբ շնորհավորում ենք ձեր հայրենի երկրի վերածննդյան հիսուներորդ տարեդարձը՝ մաղթելով հավետ ծաղկում և երջանկություն վրաց տաղանդավոր ժողովրդին, սովետական ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում:

Սուրբ Էջմիածնից և Մեր սրտից Ձեզ և ձեր եկեղեցուն եղբայրական սիրո ողջույն ամենաբարի ցանկություններով:

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

14-ը մայիսի 1971 թ.,
Ս. Էջմիածին

* * *

Ձերդ Սրբություն,

Հանույքով սրտագին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, իմ թանկագին հայրենիքիս՝ Սովետական Վրաստանի հիսնամյակի առիթով Ձեր հղած շնորհավորանքի համար:

Եղբայրաբար ողջագուրում եմ Ձեզ: Փոխադարձաբար ցանկանում եմ Ձեր հայրենիքին՝ մեր մերձավոր, հարազատ հարևանին, հետագա ծաղկում և Ձերդ Սրբությանը՝ երջանկություն և երկար կյանք:

ԵՓՐԵՄ Բ
**ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ**

17-ը մայիսի 1971 թ.,
Թբիլիսի